ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԱՊՐԱՆՔԻ ՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ
N ՀՀ Ո ՀՄԱԱՊՁԲ-47-ՄՈԲԱՅԼ/2021/ՊԾ

ք.Երևան

«15» 03 2022թ.

ՀՀ ոստիկանությունը ի դեմս ոստիկանության պետի տեղակալ, ոստիկանության գնդապետ Վ.Մովսիսյանի, որը գործում ոստիկանության կանոնադրության հիման վրա, այսուհետ «Գնորդ», մի կողմից և «Ալիկանտե» ՍՊԸ-ն, ի դեմս տնօրեն Ա.Պրոնիշչևի, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա, այսուհետ «Վաճառող» մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1. Վաճառողը պարտավորվում է սույն պայմանագրով (այսուհետ՝ պայմանագիր) սահմանված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով Գնորդին մատակարարել պայմանագրի N 1 հավելվածով՝ Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցով նախատեսված ապրանքը (այսուհետ՝ ապրանք), իսկ Գնորդը պարտավորվում է ընդունել ապրանքը և վճարել դրա համար:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Գնորդն իրավունք ունի՝

2.1.1 Ապրանքը պայմանագրով սահմանված ժամկետում Վաճառողի կողմից չմատակարարելու դեպքում հրաժարվել ապրանքից, եթե մատակարարման ժամկետները խախտվել են 15 օրից ավելի:

2.1.2 Եթե հանձնվել է անպատշաճ որակի՝ պայմանագրով նախատեսված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ապրանք՝

ա) պահանջել հատուցելու ապրանքի անպատշաճ որակի լինելու պատճառով իր կատարած ծախսերը.

բ) չընդունել ապրանքն՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ապրանքը պայմանագրին համապատասխանող որակի ապրանքով անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու պայմանագրի 6.3 կետով նախատեսված տուգանքը.

գ) հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ապրանքի համար վճարված գումարը:

2.1.3 Եթե հանձնվել է պայմանագրով որոշվածից պակաս քանակի ապրանք, ապա՝

ա) պահանջել լրացնելու ապրանքի պակաս հանձնված քանակը,

բ) հրաժարվել հանձնված ապրանքից և դրա համար վճարելուց, իսկ եթե ապրանքի համար վճարվել է, ապա պահանջել վերադարձնելու վճարված գումարը և վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

2.1.4 Եթե հանձնվել է տեսակի պայմանի խախտմամբ ապրանք, իր ընտրությամբ՝

ա) ընդունել տեսակի վերաբերյալ պայմանին համապատասխանող ապրանքը և հրաժարվել մնացած ապրանքներից.

բ) հրաժարվել հանձնված բոլոր ապրանքներից և պահանջել վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը.

գ) պահանջել տեսակի վերաբերյալ պայմանին չհամապատասխանող ապրանքի անհատույց փոխարինում պայմանագրով նախատեսված տեսակին համապատասխան ապրանքով:

2.1.5 Վաճառողի կողմից մատակարարման ժամկետների խախտման դեպքում իր հայեցողությամբ սահմանել ապրանքի մատակարարման նոր ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

2.1.6 Վաճառողից պահանջել հատուցելու վնասները, եթե Գնորդը Վաճառողի կողմից պարտավորությունը խախտելու հետևանքով պայմանագրի լուծումից հետո ողջամիտ ժամկետում այլ անձից ավելի բարձր, սակայն ողջամիտ գնով գնել է ապրանք՝ պայմանագրով նախատեսվածի փոխարեն՝ պայմանագրով սահմանված և դրա փոխարեն կնքված գործարքի գների միջև տարբերության չափով, ինչպես նաև ապրանքն այլ անձից ձեռք բերելու համար իր կատարած բոլոր անհրաժեշտ և ողջամիտ ծախսերը:

2.1.7 Միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Վաճառողն էականորեն խախտել է պայմանագիրը.

2.1.7.1 Վաճառողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատակարարվել է անպատշաճ որակի ապրանք որը չի կարող փոխարինվել Գնորդի համար ընդունելի ժամկետում.

բ) ապրանքի մատակարարման ժամկետները խախտվել են 15 օրից ավելի,

2.1.8 Զննել ապրանքը և հայտնաբերված թերությունների մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին:

2.2 Գնորդը պարտավոր է՝

2.2.1 Կատարել պայմանագրին համապատասխան մատակարարված ապրանքի ընդունումն ապահովող բոլոր անհրաժեշտ գործողությունները:

2.2.2 Վաճառողի հանձնած ապրանքից պայմանագրին համապատասխան հրաժարվելու դեպքում, ապահովել այդ ապրանքի պատասխանատու պահպանությունը և դրա մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին:

2.2.3 Պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում մատակարարված ապրանքն ընդունելու դեպքում Վաճառողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ վճարման ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 6.5 կետով նախատեսված տույժը:

2.2.4 Ապրանքի քանակի, տեսականու, որակի մասին պայմանագրի պայմանները խախտելու մասին Վաճառողին ծանուցել թերությունը հայտնաբերելուց հետո անմիջապես կամ այն բանից հետո՝ ողջամիտ ժամկետում, երբ պայմանագրի համապատասխան պայմանի խախտումը պետք է հայտնաբերված լիներ՝ ելնելով ապրանքի բնույթից և նշանակությունից:

2.2.5 Պայմանագրի 2.3.3 կետի համաձայն պայմանագրի լուծումից հետո Վաճառողին հատուցել վերջինիս պատճառված և սահմանված կարգով հիմնավորված վնասները:

2.3 Վաճառողն իրավունք ունի՝

2.3.1 Գնորդից պահանջել ընդունելու պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով մատակարարված ապրանքը:

2.3.2 Գնորդից պահանջել վճարելու պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով մատակարարված և Գնորդի կողմից ընդունված ապրանքի համար իրեն վճարման ենթակա գումարները:

2.3.3 Միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Գնորդն էականորեն խախտել է պայմանագիրը:

2.3.3.1 Գնորդի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե բազմիցս խախտվել են ապրանքի համար վճարելու ժամկետները:

2.3.4 Գնորդի համաձայնությամբ վաղաժամկետ մատակարարել ապրանքը:

2.4 Վաճառողը պարտավոր է՝

2.4.1 Գնորդին հանձնել ապրանքը՝ պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով:

2.4.2 Ապահովել ապրանքի մատակարարումը պայմանագրի 2.1.2 կետի բ) ենթակետին և (կամ) 2.1.5 կետին համապատասխան՝ Գնորդի կողմից սահմանված ժամկետներում:

2.4.3 Գնորդին հանձնել երրորդ անձանց իրավունքներից ազատ ապրանք:

2.4.4 Գնորդին հանձնել պայմանագրով նախատեսված որակի և քանակի ապրանք՝ պայմանագրով նախատեսված ժամկետներում և հասցեով, իսկ Գնորդի պահանջով տրամադրել ապրանքի որակը հավաստող՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված փաստաթղթեր:

2.4.5 Թերի մատակարարում թույլ տալու դեպքում, պայմանագրով նախատեսված կարգով, լրացնել թերի մատակարարվածը:

2.4.6 Հետ տանել Գնորդի կողմից պայմանագրի 2.2.2 կետին համապատասխան՝ պատասխանատու պահպանության ընդունված ապրանքը կամ ողջամիտ ժամկետում տնօրինել այն, ինչպես նաև հատուցել ապրանքը պատասխանատու պահպանության ընդունելու, այն իրացնելու կամ Վաճառողին վերադարձնելու հետ կապված անհրաժեշտ ծախսերը:

2.4.7 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.8 Գնորդին հանձնել ապրանքի պատկանելիքները և համապատասխան փաստաթղթերը:

2.4.9 Պայմանագրի 2.1.7 կետի համաձայն պայմանագրի լուծումից հետո Գնորդին հատուցել վերջինիս պատճառված և սահմանված կարգով հիմնավորված վնասները:

2.4.10 Որակավորման և պայմանագրի ապահովում ներկայացրած անձը պարտավոր է ապահովումների գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Գնորդին:

3. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ ԵՎ ՎՃԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Պայմանագրի գինը կազմում է ***755 940 000 (յոթ հարյուր հիսունհինգ միլիոն ինը հարյուր քառասուն հազար)*** ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ-ն: Պայմանագրի գինը ներառում է պայմանագրի կատարումն ապահովելու նպատակով Վաճառողի կողմից կատարվելիք բոլոր վճարները (ծախսերը), այդ թվում՝ հարկերը, տուրքերը, փոխադրման, ապահովագրման ծախսերը, պարգևավճարները և ակնկալվող շահույթը:

Ապրանքի մատակարարման գինը կայուն է և Վաճառողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Գնորդը նվազեցնելու այդ գինը:

3.2 Գնորդն իրեն մատակարարված ապրանքի դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Վաճառողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված չափերով և ամիսներին: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 25-ը:

4. ԱՊՐԱՆՔԻ ՈՐԱԿԸ ԵՎ ԵՐԱՇԽԻՔԸ

4.1 Վաճառողը երաշխավորում է մատակարարված ապրանքի որակի համապատասխանությունը պետական ստանդարտի պահանջներին:

4.2 Հիմնական միջոց հանդիսացող ապրանքների գնման դեպքում երաշխիքային ժամկետ է սահմանվում Գնորդի կողմից ապրանքն ընդունվելու օրվան հաջորդող օրվանից հաշված սույն պայմանագրի թիվ 1 հավելվածով սահմանված ժամկետները համապատասխանաբար: Եթե երաշխիքային ժամկետի ընթացքում ի հայտ են եկել մատակարարված ապրանքի թերություններ, ապա Վաճառողը պարտավոր է իր հաշվին, Գնորդի կողմից սահմանված ողջամիտ ժամկետում վերացնել թերությունները:

5. ԱՊՐԱՆՔԻ ՀԱՆՁՆՈՒՄԸ ԵՎ ԸՆԴՈՒՆՈՒՄԸ

5.1 Մատակարարված ապրանքն ընդունվում է Գնորդի և Վաճառողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ապրանքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսվում է Գնորդի և Վաճառողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով ապրանքի մատակարարման համար նախատեսված օրը ներառյալ Վաճառողը Գնորդին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ապրանքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 3.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 3): Ընդ որում Վաճառողը հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

5.2 Եթե մատակարարված ապրանքը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Գնորդը պայմանագրի 5.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 5 աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Վաճառողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

5.3 Եթե մատակարարված ապրանքը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմաններին, ապա Գնորդը չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 5.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Վաճառողին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Գնորդը ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Վաճառողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

5.4 Եթե պայմանագրի 5.2 կետով սահմանված ժամկետում Գնորդը չի ընդունում մատակարարված ապրանքը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատակարարված ապրանքը համարվում է ընդունված և պայմանագրի 5.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Գնորդը էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Վաճառողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

6. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

6.1 Վաճառողը պատասխանատվություն է կրում հանձնած ապրանքի որակի և պայմանագրով նախատեսված մատակարարման ժամկետների պահպանման համար:

6.2 Վաճառողի կողմից պայմանագրով նախատեսված ապրանքի մատակարարման ժամկետների խախտման դեպքում Վաճառողից յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար գանձվում է տույժ՝ մատակարարման ենթակա, սակայն չմատակարարված ապրանքի գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերրորդական) տոկոսի չափով:

6.3 Պայմանագրի 1.1 կետում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ապրանք մատակարարելու յուրաքանչյուր դեպքում Վաճառողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի գնի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով: Ընդ որում տուգանքը հաշվարկվում է նաև ապրանքի մատակարարումը սույն պայմանագրով սահմանված ժամկետում կատարելու, սակայն պատվիրատուի կողմից այդ չընդունվելու դեպքում:

6.4 Պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը հաշվարկվում և հաշվանցվում են Վաճառողին վճարման ենթակա գումարների հետ:

6.5 Գնորդի կողմից պայմանագրի 3.3 կետով նախատեսված ժամկետի խախտման համար Գնորդի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերրորդական) տոկոսի չափով:

6.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

6.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտվորությունները լրիվ կատարելուց:

7. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

8. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

8.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի՝ պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայման է հանդիսանում պայմանագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու հանգամանքը:

8.2 Պայմանագրից ծագած՝ կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

8.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ պայմանագիրը կնքելու նպատակով կազմակերպված գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Վաճառողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Գնորդը միակողմանիորեն լուծում է պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Գնորդը չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Վաճառողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Գնորդի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

8.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

8.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ապրանքի ծավալների կամ ձեռք բերվող ապրանքի միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

8.6 Ապրանքի մատակարարման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Վաճառողի առաջարկության առկայության դեպքում, պայմանով, որ Գնորդի մոտ չի վերացել ապրանքի օգտագործման պահանջը, իսկ Վաճառողի առաջարկությունը ներկայացվել է ոչ ուշ, քան պայմանագրով ի սկզբանե մատակարարման համար սահմանված ժամկետը լրանալուց առնվազն 5 օրացուցային օր առաջ: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում ապրանքի մատակարարման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

8.7 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Վաճառող կամ Գնորդ) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Վաճառողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Վաճառողը:

8.8 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ապրանքի մատակարարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ապրանքի մատակարարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

8.9 Վաճառողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Գնորդը հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Վաճառողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից: Պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը տեղեկագրում հրապարակվելու օրը Գնորդը այն ուղարկվում է նաև Վաճառողի էլեկտրոնային փոստին:

8.10 Պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

8.11 Պայմանագիրը կազմված է 16 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ: Պայմանագրի N 1, N 2, N 3 և N 3.1 հավելվածները, համարվում են պայմանագրի անբաժանելի մասը:

8.12 Պայմանագրի հետ կապված հարաբերությունների նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

8.13 Պայմանագրով նախատեսված ապրանքների մատակարարումն իրականացվում է այդ նպատակով ֆինանսական միջոցների առկայության և դրա հիման վրա կողմերի միջև համապատասխան համաձայնագրի կնքման միջոցով: Պայմանագիրը լուծվում է, եթե այն կնքելու օրվան հաջորդող վեց ամսվա ընթացքում այդ նպատակով պայմանագրի կատարման համար ֆինանսական միջոցներ չեն նախատեսվում: Եթե պայմանագրի կատարման համար հատկացված ֆինանսական միջոցների չափը

գերազանցում է գնումների բազային միավորի քսանհինգապատիկը, ապա Գնորդի կողմից համաձայնագիր կկնքվի, եթե Վաճառողի կողմից տուժանքի ձևով ներկայացված որակավորման և պայմանագրի ապահովումները՝ նախատեսված ֆինանսական միջոցների չափով, փոխարինվում է երաշխիքով կամ կանխիկ փողով՝ հաշվի առնելով ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշման N 1 հավելվածի 32-րդ կետի 17-րդ ենթակետի «բ» պարբերության պահանջները: Ընդ որում, Վաճառողը համաձայնագիրը կնքում, իսկ տուժանքի ձևով ներկայացված որակավորման և պայմանագրի ապահովումների փոխարինման դեպքում նաև նոր ապահովները Գնորդին ներկայացնում է համաձայնագիր կնքելու ծանուցումը ստանալու օրվանից տասնհինգ աշխատանքային օրվա ընթացքում: Հակառակ դեպքում պայմանագիրը Գնորդի կողմից միակողմանիորեն լուծվում է:25

9. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

ԳՆՈՐԴ	ՎԱՃԱՌՈՂ
ՀՀոստիկանություն	«Ալիկանտե» ՍՊԸ
ք. Երևան, Նալբանդյան 130	Ք.Երևան, Կոմիտասի պ.54/155շ
ՀՀ Ֆինանսների նախարարության	«Ամերիաբանկ» ՓԲԸ
Աշխատակազմի գործառնական	Հ/Հ 1570012604290100
վարչություն	ՀՎՀՀ 01014536
Հ/Հ 900011037000	էլ. հասցե՝ alikante60@mail.ru
ՀՎՀՀ 01533334	Հեռ. 010232355
Հեռ. 010 59-68-57	
էլ. փոստ:policetv.gnumner@mail.ru	
Վ. Մովսիսյան	Տնօրեն Ա.Պրոնիշև
/ստորագրություն/	/ստորագրություն/ Կ.Տ.
Կ.Տ.	

Անհրաժեշտության դեպքում պայմանագրում կարող են ներառվել ՀՀ օրենսդրությանը չհակասող դրույթներ:

Հավելված N 1
«15» 03 2022թ. կնքված
ՀՀ Ո ՀՄԱՊՁԲ-47-ՄՈԲԱՅԼ/2021/ՊԾ ծածկագրով պայմանագրի

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

Ապրանքի										
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը	տեխնիկական բնութագիրը	չափման միավորը	միավոր գինը/ՀՀ դրամ	ընդհանուր գինը/ՀՀ դրամ	ընդհանուր քանակը	մատակարարման		
								հասցեն	ենթակա քանակը	Ժամկետը***
1	48151300/505	ZHEJIANG Huaan Securiy Equipment Co LTD TBD-28001P system	**Պարեկային ավտոմոբիլներում mobile համակարգ (տեղադրումով)՝** 1. Տրանսպորտային միջոցի սրահը լրացուցիչ տեխնիկական սարքերով և սարքավորումներով կահավորման համար, անհրաժեշտ է, որպեսզի մեքենայի սրահի առաջնամասում, բեռնախցիկում, առջևի բամպերի և հագոցի տակ նախատեսված լինեն լրացուցիչ լարանցումներ՝ ներքին հնարավորինս գործարանային հարդարմամբ: Ինչպես նաև, սարքերի տեղադրումը, տեղադրման դիրքն ու տեղը պետք է կատարվի այնպես, որպեսզի նրանց միացվող մալուխները, մալուխների միացման ուղղությունները և քողարկումից դուրս եկած, մինչև սարք հասնող հատվածը լինի չլարված, մինիմալ երկարության, կոկիկ և չխոչնդոտի մեքենան շահագործող անձնակազմի ազատ տեղաշարժին: Մասնավորապես այն սարքերի դեպքում, որոնք տեղադրվում են սրահի ներքևի հատվածում և մեքենա նստելու, կամ ընթացքում ոտքերի շարժի հետևանքով ունեն լարերի պոկվելու կամ միացումների վնասման ռիսկ: Վնասվելու ռիսկ են պարունակում նաև այն միացումները որոնց	Հատ	1 679 866.66	755 940 000	450	ք Երևան, Իսակովի 7	**450**	Համաձայնագիրը ուժի մեջ մտնելուց 20 օր հետո,մեքենան տրամադրելուց 5 օրվա ընթացքում, բայց ոչ ուշ քան 31.03.2022թ.

				դեպքում միացման հատվածում մալուխները թեքվում են 90° կամ ավելի փոքր անկյան տակ: Հետեվաբար անհրաժեշտ է հնարավորինս բացառել նմանատիպ միացման լուծումները: Լարանցումները կատարելու նպատակով պետք է ապամոնտաժել և մոնտաժել բեռնախցիկը, սրահը, հագոցի տակ որոշ հանգույցներ և առջևի բամպերը, միաժամանակ չվնասելով գործարանային ամրակները և կոճակները: Յուրաքանչյուր սարքին միացվող լարը հնարավորինս պետք է տարբերվի իր գույնով և լինի պիտակավորված(labeling): Իսկ վերջիններիս ձևն ու այլ մանրամասնությունները նախապես պետք է քննարկվի ՀՀ ոստիկանության կապի և ՏՏ վարչության մասնագետների հետ: Լարանցումների բոլոր միացումները պետք է կատարվեն ծայրակալների և պաշտպանիչ ջերմային կեմբրինգների օգտագործմամբ: Բեռնախցիկի վերջնամասում մեկուսիչից սալիկի վրա պետք է տեղադրված լինեն բոլոր սարքավորումների, լարանցումների և մալուխների միացման կառավարման վահանակը՝ հասանելի, ամուր և անվտանգ հարդարմամբ: Որից հետո ամբողջ վահանակը պետք է ծածկվի մեկուսիչ կափարիչով, իսկ չափը համապատասխանի միացման կառավարման վահանակի չափսերին: Յուրաքանչյուր տեղադրվող սարքավորում պետք է մոնտաժված լինի իր առանձին մալուխով և պետք է ունենան առանձին ապահովիչ, անհրաժեշտության դեպքում զտիչ և անջատիչ: Բոլոր լարանցումների սխեմաների առկայությունը՝ առանձին տեխնիկական նկարագրությամբ, պարտադիր է: Բոլոր տրանսպորտային միջոցները լինեն միանման մոնտաժված: Բեռնախցիկի ապահովիչների բլոկը միացումներից հետո ունենա հավելյալ ազատ առնվազն 2 տեղ հետագայում չնախատեսված օգտագործման համար: Լրացուցիչ միացվող սարքերն ու սարքավորումներն են՝ 1. 3G երթուղիչ - 12V 1,2A: 2. Թերմոտպիչ (թերմոթղթի լայնությունը՝ 80մմ) - 12V 1,5A, լիցքավորիչը պետք է միանա ավտոմեքենայի մեջ տեղադրված 12V հավելյալ վարդակներից: 3. Ավտոմեքենայի թվային ռադիոկայան - 12V 15A,							

				քաշը 1520 գրամ ±5%, չափսեր 61,5x177x179 մմ ±5%: 4. GPS/3G ընդունիչ - 12V 0.5A: 5. Ձեռքի դյուրակիր թվային ռադիոկայան լիցքավորիչ - 12V 2A, քաշը-100գ ±2%, չափսերը 60մմ-60մմ-40մմ ±2%, լիցքավորիչը պետք է միանա ավտոմեքենայի մեջ տեղադրված 12V հավելյալ վարդակներից: 6. Պետհամարանիշ կարդացող տեսախցիկ - 12V 2A, չափսերը Ոչ ավել քան 220 x 70 x 70 մմ, քաշը 870գ ±10%		*					
				7. Լուսաձայնային ազդանշան (փարոսիկներ, բարձրախոս) 12V 21A 8. Դիմային փարոսիկներ 12V 6A 9. 12V-220V փոխակերպիչ մուտքայինը 12V 15A, ելքայինը 1500w հզորությամբ 10. Ալկոմետրի լիցքավորիչ - 12 V / 3 A (ավտոմոբիլի բորտային ցանց) միացումը՝ հավելյալ 12V վարդակից 11. Շարժական ուղղորդող սպիտակ լույս 12V 3A 12. Համազգեստին ամրացվող տեսախցիկի լիցքավորիչ 12V 1.5A, լիցքավորվում է ավտոմեքենայի մեջ տեղադրված 12V հավելյալ վարդակներից: 2. Լուսաձայնային ազդանշանը (փարոսիկներ, բարձրախոս) մատակարարի կողմից պետք է տեղադրված և կահավորված լինի տրանսպորտային միջոցի տանիքին, բարձրախոսը՝ ներկառուցված լուսաձայնային ազդանշանի մեջտեղի հատվածում: Լուսաձայնային համակարգը պետք է ունենա հետևյալ տեխնիկական հատկանիշներ՝ - Լուսարձակումը ՝ առջևից, հետևից, կողքերից և վերևից, կարմիր-կապույտ-սպիտակ: - Լուսարձակումը լինի առանձնացված՝ առջևից և հետևից: - Լուսարձակման ռեժիմները լինեն թույլ, միջին, ուժեղ և շրջանաձև: - Լուսային ռեժիմների քանակը ոչ պակաս 16-ից: Ձայնային ռեժիմների քանակը ոչ պակաս 14 ռեժիմից:							

				Լուսաձայնային սարքը բացի հիմնական հատվածից վերևի մասում աջ և ձախ հատվածներում ունենա լրացուցիչ շրջանաձև (360°) լուսարձակում՝ կարմիր-կապույտ գույներով, յուրաքանչյուրը բաղկացած առնվազն 8 հատ LED-ից, որոնց կառավարումը իրականացվի ղեկավարման վահանակի միջոցով՝ առանձին կոճակներով, կողային սպիտակ լույսերի հետ համատեղ: - Լուսաձայնային սարքը բաղկացած լինի կարմիր-կապույտ առնվազն 20 լրակազմով, յուրաքանչյուր լրակազմը բաղկացած լինի առնվազն երեք լեդից նվազագույնը 3Վտ հզորությամբ՝ պարտադիր խոշորացույցով, առկայծվող լուսաճառագայող դիոդներով (LED), ուղղորդող կողային 2 սպիտակ լրակազմով, յուրաքանչյուրը առնվազն երեք լեդ-ից նվազագույնը 4վտ հզորությամբ, յուրաքանչյուր լրակազմը ամրացված հովացնող տակդիրների վրա: - Լուսային ռեժիմների կառավարումը կառավարվող վահանակով, համակցված ձայնաազդանշանային համակարգից: - Աշխատանքային լարումը 12-ից 14 Վոլտ (հաստատուն): - Աշխատանքային ընթացիք առավելագույն ծախսը առանց ձայնային ազդանշանի 6Ա/ժամ: - Շրջակա միջավայրի ջերմաստիճանը -40°-ից +50°C: - Ձայնաազդանշանային համակարգը- բարձրախոս 200Վտ 4 Օհմ հզորությամբ, (HA-200W 4 Ohm: 350-5000HZ: 115-120dB): - Ձայնաազդանշանային համակարգը ապահոված լինի խոսափողով, որը ներկառուցված լինի կառավարման վահանակի մեջ: - Մարտկոցից դեպի ղեկավարման բլոկ եկող հաղորդալար 2 գույնով (կարմիր, սև),համապատասխան հաստությամբ, առանձին ապահովիչով: - IP-67 ստանդարտով: - Լուսաձայնային սարքավորման հաստությունը լինի 8.5 սմ (+/- 3%.առանց ամրակի): - Լուսաձայնային սարքավորման չափսերը ՝							

				երկարությունը 120 սմ., լայնությունը 30 սմ(+/- 2%.) - Լուսարձակումը լինի ոչ ուղղորդված: - Ամրակցումը լինի ունիվերսալ, ներկայացվող ավտոմեքենաներին համապատասխան: Բացի այդ, տրանսպորտային միջոցի առջևի բամպերի ներքևի հատվածում, աջ և ձախ հատվածներում պետք է տեղադրված լինեն առկայծող փարոսիկներ, ստորև ներկայացվող տեխնիկական բնութագրի համապատասխան. -- Չափսերը 170*41*47 մմ (+/- 2%)							
				-Լամպի տեսակը - լուսադիոդային (LED) -Աշխատանքային լարումը - 10-ից 14 Վոլտ -Իրանը – պարտադիր ալյումինային և հովացվող -Լամպերի գույնը – կարմիր և կապույտ -Լուսարձակումը - ուղղորդված -Հզորությունը – նվազագույնը 72 Վատտ -Լրակազմը – բաղկացած լինի 4 հատ լուսատուից (2 հատ կարմիր և 2 հատ կապույտ), իսկ յուրաքանչյուր լուսատու բաղկացած լինի նվազագույնը 6 LED-ից, յուրաքանչյուրը նվազագույնը 3 Վատտ հզորությամբ (4x6x3 Վատտ) -Թարթման ռեժիմ – ունենան թարթման առնվազն 4 ռեժիմ և այդ ռեժիմներից մեկը համընկնի ավտոմեքենայի վրա տեղադրված լուսաձայնային սարքավորման լույսերի թարթման ռեժիմի հետ /Գործարկումը կատարվի լուսաձայնային սարքավորման ղեկավարման վահանակից -Շրջակա միջավայրի ջերմաստիճանը -40°-ից +65°C -IP-67 ստանդարտով - Աշխատանքային ընթացիք առավելագույն ծախսը 6-7Ա/ժամ - Առկայծող փարոսիկները պետք է Ունենան առանձին փոխանջատիչ 3. Տրանսպորտային միջոցի վրա պատվիրատուի կողմից նշվող վայրում պետք է տեղադրված լինի շարժական ուղղորդող սպիտակ լույս, որի տենիկական հատկանիշներն են՝ 12-14V 30-35 W, իրանի չափսերը բաց վիճակում՝ 229*229*353մմ							

				(+/- 2%), փակ վիճակում 229*320*169մմ (+/- 2%), բաղկացած լինի առնվազն 9 LED-ից, իր առանցքի շուրջ 360 աստիճան հորիզոնական և նվազագույնը 135 աստիճան ուղղահայաց ուղղություններով հեռակառավարման եղանակով առնվազն 30մ հեռավորությունից: Ունենա թարթման առագ և դանդաղ ռեժիմներ: Ցանկացած դիրքից զրոյական դիրքին վերադառնալու կոճակի առկայություն՝ հեռակառավարման վահանակի վրա: 4. Տրանսպորտային միջոցի տանիքին տեղադրվող ռադիոկայանի ալեհավաքի միացման մալուխի համար նախատեսված լինի առանձին մալուխատար: 5. Պատվիրատուի կողմից տրամադրվող անհրաժեշտ սարքերի և սարքավորումների՝ թվային ռադիոկայանի, GPS/3G ընդունիչի, 3G երթուղիչ, պետհամարանիշ կարդացող տեսախցիկի մոնտաժման (ներքին հարդարմամբ) և տեղադրման աշխատանքները պետք է իրականացվի մատակարարի կողմից: Նշված սարքերի և սարքավորումների մոնտաժման և տեղադրման վայրը ավտոմեքենայում ներկայացված է ստորև՝ 1) Թվային ռադիոկայանը անհրաժեշտ է տեղադրել ավտոմեքենայի սրահի առաջնամասում՝ ցուցիչների վահանակի կամ առջևի նստարանների միջնամասում, կախված ավտոմեքենայի ներքին կահավորանքից: Այն նաև պետք է տեսանելի և հասանելի լինի վարորդի և առջևի ուղևորի համար: Իսկ ալեհավաքը անհրաժեշտ է տեղադրել ավտոմեքենայի տանիքում 2) GPS/3G ընդունիչը անհրաժեշտ է տեղադրել ավտոմեքենայի ցուցիչների վահանակի հետնամասում՝ դժվար հասանելի տեղում, իսկ GPS և 3G ալեհավաքները պետք է տեղադրվեն ցուցիչների վահանակի վրա՝ առջևի դիմապակու տակ վարորդի դիմացի հատվածում, 4) 3G երթուղիչը պետք է տեղադրված լինի մեքենայի մեջ, հասանելի հատվածում և միացված լինի հավելյալ ապահովիչների վահանակից: 3) Պետհամարանիշ կարդացող տեսախցիկը անհրաժեշտ է տեղադրել դիմապակու հայելու աջակողմյան հատվածում, որպեսզի տեսախցիկը տեսանկարահանի ավտոմեքենայի դիմացի							

				հատվածը, այն պետք է 3G երթուղիչին միացված լինի UTP cat 6 մալուխով: Վերը նշված սարքերի միացման վարդակներից բացի, մեքենան պետք է ապահովված լինի լրացուցիչ թվով 8 հատ վարդակներով, որոնցից 5-ը՝ ամրացված սրահի առաջնամասում՝ կամ առջևի նստատեղերի միջնամասում, իսկ 3-ը՝ բեռնախցիկում: Առաջնամասում տեղադրվող վարդակներից 3-ը լինեն USB 5V. 3.1A հզորությամբ: 12V-ի համար նախատեսված վարդակներն ապահովեն նվազագույնը 120W հզորություն (12V , 10A): Վարդակները պետք է ունենան հատուկ ամրակներ և ապահովված լինեն առանձին ապահովիչով և անջատիչով: Բեռնախցիկում տեղադրված լինի 12V-220V փոխակերպիչ 1500W հզորությամբ, որի վրա առկա լինեն՝ մարտկոցի լիցքի չափը և միացված բեռի կատարած աշխատանքի ծախսի ցուցիչներ, ցածր լիցքի դեպքում ձայնային ազդանշանի տվիչ, միացման անջատման կոճակ և USB 5V բնիկ: Քաշը 1.37կգ. (+/- 2%), չափսերը 24.5*12*.7.5* սմ (+/- 2%).: Փոխակերպիչի սնման լարանցումները կատարված լինեն անմիջապես լրացուցիչ մարտկոցից, առնվազն 10մմ^2 կտրվածքի մակերեսով կարմիր և սև գույնի լարերով: Լրացուցիչ միացվող սարքերի և սարքավորումների միացման հանգամանքից ելնելով մեքենայի մարտկոցից՝ դրան համապատասխանեցված կտրվածքի մակերեսով և մեկուսիչ շերտով մալուխով, որը հավելյալ մասնակի անհրաժեշտ մասերում պաշտպանված լինի գոֆրեով, ինչպես նաև մարտկոցից ելնող մալուխի վրա տեղադրված լինի 75-100A փակ թափանցիկ կափարիչով ապահովիչ: 7. Բոլոր սարք-սարքավորումների տեղադրման կետերը վերջնական կտրամադրվեն հաղթող ընկերությանը : Աշխատանքները պետք է կատարվեն ք.Երևանում 8. Երաշխիքային սպասարկում՝ առնվազն 1 տարի և այն իրականացնելու նպատակով, Մատակարարը ՀՀ տարածքում պետք է ունենա սպասարկման կենտրոն կամ գործող							

			սպասարկման կենտրոնի/ների (այսուհետ՝ Կենտրոն) հետ ունենա վարձակալության պայմանագիր, որը պետք է ապահոված լինի անհրաժեշտ նյութատեխնիկական բազայով և մասնագիտական անձնակազմով:							

;ԳՆՈՐԴ

ՀՀոստիկանություն
ք. Երևան, Նալբանդյան 130
ՀՀՖինանսներինախարարության
աշխատակազմիգործառնականվարչություն
Հ/Հ 900011037000
ՀՎՀՀ 01533334
Հեռ. 010 59-68-57
Էլ. փոստ:policetv.gnumner@mail.ru

Վ. Մովսիսյան
/ստորագրություն/
Կ.Տ.

ՎԱՃԱՌՈՂ

«Ալիկանտե» ՍՊԸ
Ք.Երևան, Կոմիտասի պ.54/155շ
«Ամերիաբանկ» ՓԲԸ
Հ/Հ 1570012604290100
ՀՎՀՀ 01014536
Էլ. հասցեն՝ alikante60@mail.ru
Հեռ. 010232355

Տնօրեն՝ Ա. Միրոնիշչև
(ստորագրություն) Կ.Տ.

Հավելված 2
ՀՀ ֆինանսների նախարարի
2017 թվականի հուլիսի 18-ի
N 356-Ն հրամանի

«Հավելված
ՀՀ ֆինանսների նախարարի
2017 թվականի մայիսի 20-ի
N 230-Ն հրամանի

Պայմանագրի կողմ

_____

_____

գտնվելու վայրը _____
հհ _____
հվհհ _____

Պատվիրատու

_____

_____

գտնվելու վայրը _____
հհ_____
հվհհ_____

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՄ ԴՐԱ ՄԻ ՄԱՍԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

« » « » 20 թ.

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝

_____

Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «____» «_____» 20 թ.
Պայմանագրի համարը՝ _____
Պատվիրատուն և Պայմանագրի կողմը՝ հիմք ընդունելով պայմանագրի կատարման վերաբերյալ « » « » 20 թ. դուրս գրված N ___ հաշիվ ապրանքագիրը, կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.
Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը մատակարարել է հետևյալ ապրանքները՝

N	Մատակարարված ապրանքների							
	անվանումը	տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը	քանակական ցուցանիշը		կատարման ժամկետը		Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/	Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/
			ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի	ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի		

Սույն արձանագրության երկկողմ հաստատման համար հիմք հանդիսացած հաշիվ ապրանքագիրը և դրական եզրակացությունը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Ապրանքը հանձնեց

_____
ստորագրություն

_____
ազգանուն, անուն
Կ.Տ.

Ապրանքը ընդունեց

_____
ստորագրություն

_____
ազգանուն, անուն
Կ.Տ.

Հավելված 2.1
« » 20 թ. կնքված
ծածկագրով պայմանագրի

ԱԿՏ N _____
պայմանագրի արդյունքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ _____-ի (այսուհետ՝ Գնորդ) և _____
Գնորդի անվանումը Վաճառողի անվանումը
(այսուհետ՝ Վաճառող) միջև 20 թ. _____ -ին կնքված N _____
պայմանագրի կնքման ամսաթիվը պայմանագրի համարը
պայմանագրի շրջանակներում Վաճառողը 20 թ. _____-ին հանձնման-ընդունման նպատակով Գնորդին հանձնեց ստորև նշված ապրանքները.

Ապրանքի		
անվանումը	չափման միավորը	քանակը (փաստացի)

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

ԿՈՂՄԵՐԸ

Հանձնեց

_____
ազգանուն, անուն

_____
Ստորագրություն

Ընդունեց
հայտը նախագծած ներկայացուցիչ՝

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն